

# Հայտարարություն Հայաստանում անալոգային հեռարձակումն անջատելուց հետո մարզային հեռուստաընկերությունների հետագա ճակատագրի կապակցությամբ

Նոյեմբերի 7, 2016

Անցած շաբաթ՝ 2016թ. նոյեմբերի 3-ին, Հայաստանի մարզերում գործող 6 հեռուստաընկերությունների ղեկավարներ բաց նամակով դիմեցին ՀՀ նախագահին, Ազգային ժողովի նախագահին եւ վարչապետին՝ հայտնելով, որ երկրում անալոգային հեռարձակումն անջատելուց հետո իրենք գրկվել են լսարանից եւ հայտնվել փակման եզրին: Ընդհանուր առմամբ, այդ ճակատագրին են արժանացել 11 մարզային հեռուստաընկերություններ:

Դեռևս 2010-ին՝ թվային հեռարձակմանն անցնելու գործընթացի սկզբում, ոլորտի պատասխանատուներն առաջ քաշեցին խոցելի մի մոդել՝ համաձայն որի յուրաքանչյուր մարզում գործելու է մեկ տեղական հեռուստաընկերություն, իսկ մնացածը պետք է փակվեն: Այդ մոտեցմամբ փոփոխվեց նաև «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, եւ անցկացվեցին լիցենզավորման մրցույթներ: Սակայն մինչև օրս ոչ մասնագետներին, ոչ էլ հանրությանը որեւէ լուրջ հիմնավորում չի ներկայացվել, թե ինչու, օրինակ, Լոռու մարզում թվային համակարգով պետք է հեռարձակվի մեկ հեռուստաընկերություն, իսկ մնացած չորսը, որոնք ունեն իրենց կայուն լսարանը, դադարեն գործել:

Մենք՝ ներքոստորագրյալ լրագրողական կազմակերպություններս, արդեն 6 տարի ուսումնասիրում ենք ստեղծված անհեթեթ իրավիճակից դուրս գալու հնարավորությունները, հանդես ենք գալիս հստակ օրենսդրական եւ տեխնիկական լուծումներ պարունակող առաջարկություններով: Համոզված ենք, որ վերոհիշյալ 11 տեղական հեռուստաընկերությունների փակվելը թվային դարաշրջանում, երբ գրեթե անսահմանափակ են դարձել հեռարձակման տեխնիկական հնարավորությունները, ուղղակի անթույլատրելի եւ անընդունելի է: Թեև դեռ 2010-ին ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանը հավաստիացրեց, որ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը հիմնովին կբարելավվի, սակայն իրականացված փոփոխությունները հիմնականում ուղղված էին նախկինում որդեգրած ու լայն քննադատության արժանացած մոտեցումներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մենք կոչ ենք անում.

– ՀՀ նախագահին՝ արձագանքելով մարզերում գործող հեռուստաընկերությունների ղեկավարների բաց նամակին, ընդունել նրանց, քննարկել առկա խնդիրներն ու նպաստել համապատասխան մարմիններում անհրաժեշտ միջոցների ձեռնարկմանը, որոնք կերաշխավորեն բոլոր մարզային հեռուստաընկերությունների բնականոն գործունեության շարունակությունը թվային ժամանակաշրջանում,

– Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովին՝ գործնական քայլեր իրականացնել՝ փակման եզրին հայտնված հեռուստաընկերությունների խնդիրները հիմնովին լուծելու ուղղությամբ:

Մենք նաեւ մեր պատրաստակամությունն ենք հայտնում մասնակցելու բոլոր քննարկումներին եւ հնարավոր աջակցությունը ցուցաբերելու՝ լավագույն լուծումները գտնելու համար:

**ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ  
ՄԵԴԻԱ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**